## ԱՌԱՁՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՒԱՆԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ ՆԵՐՍԷՍ ՆԱՉԱՐԵԱՆԸ

Երեքշաբթի, 31 Յունուարի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Երեւանի ոստիկանապետ Ներսես Նազարեանի, որ պաշտօնական այցելութեամբ Լոս Անճելըս կը գտնուի։

Ոստիկանապետը Միացեալ Նահանգներ ժամանած է ընդառաջելով Փասատինայի ոստիկանապետին հրաւէրին, եւ աշխատանքայիին հանդիպումներ ունեցած էր Փասատինայի, Կլենտէյլի եւ այլ աւաններու ոստիկան պատասխանատուներու հետ։

Յանդիպումը տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ։ Ոստիկանապետ Ն. Նազարեանի կ՚ընկերանային Յայաստանի Յանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Գագիկ Կիրակոսեան, հիւպատոսարանի անձակազմեն Տիար Յակոբ Յովհաննեսեան, Փասատինայի ոստիկանութեան ներկայացուցիչ Տիար Վազգեն Կուրտիկեան եւ Փասատինայի շրջանի Յայ Դատի յանձնախումբի եւ Pasadena Armenian Poloce Advisory Councilի անդամներեն Տիար Արա Սահակեան։ Առաջնորդ Սրբազանին կողքին հիւրընկալներն էին Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներեն Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տիար Յրայր Պալեան, փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան եւ գանձապահ Տիար Վահան Պզտիկեան։

Տեսակցութիւնը անցաւ սիրալիր ու սրտբաց խորհրդակցութիւններու մթնոլորտին մեջ։ Յայրենի հիւրը տեղեկութիւններ փոխանցեց Յայաստանի ու իր առաքելութեան ծիրին մասին, ինչպես նաեւ ծանօթացաւ մեր Թեմի աշխատանքներու ընդհանուր պատկերին։

Մեկնումի պահուն, Առաջնորդ Սրբազանն ու հիւր ոստիկանապետը յուշանուէրներ փոխանակեցին։

## Prelate meets with Yerevan Police Chief Nerses Nazarian

On the evening of Tuesday, January 31, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, met with Yerevan Chief of Police Nerses Nazarian who is in Los Angeles on an official visit. The Police Chief arrived in Los Angeles in response to an invitation by Pasadena Police Chief and has since had meetings with representatives from the Pasadena and Glendale Police Departments.

The meeting took place at Glendale's St. Mary's Armenian Apostolic Church where Chief Nazarian was joined by Consul General of Armenia Gagik Giragossian, Mr. Hagop Hovannesian, Pasadena Police Department representative Mr. Vazken Gourdikian and Mr. Ara Dsahagian, member of ANC Pasadena chapter and P.A.P.A.K. Joining the Prelate were Prelacy Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, Executive Council Chairman Mr. Hrair Balian, Co-Chair Dr. Hagop Der Megerdichian, and Treasurer Mr. Vahan Bezdikian.

During the meeting, the Police Chief spoke about his mission in Armenia and became familiarized with the works of the Prelacy. Upon parting, the Prelate and the Police Chief exchanged gifts.